Արձանագրություն N4

«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/4-Ա» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 09.02.2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը, Ն. Ավետյանը, Ն. Մանուկյան:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/4-Ա» ծածկագրով ընթացակարգի Արձանագրություն N3-ով արձանագրված մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի, հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների, շտկման վերաբերյալ:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

2022 թվականի փետրվարիի 02-ի N 3 արձանագրությամբ մասնակիցների կողմից նեկայացված փաստաթղթերում արձանագված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկվել են, բացառությամբ՝ <<Տավուշշին>> ԲԲԸ-ի (<<Տավուշշին>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված <<իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը>> ներկայացված է թերի (2.12 կետը թերի է, ներկայացված է միայն 39,119% բաժնեմաս ունեցող իրական շահառուի մասին), ծավալաթերթ-նախահաշվում որոշ բաժիններում (<<Ընդամենը ըստ հողային աշխատանքների>>, <<Ընդամենը ըստ խողավակների>>, <<Ընդամենը ըստ 2 բաժնի>>) հրավերով սահմանված կշիռները պահպանված չեն և <<Չնախատեսված ծախսեր 1.5% հատկացվում են համապատասխան հիմնավորումների հիման վրա>> տողում հաշվակված թիվը գերազանցում է նախորդ տողում հաշվարկված թվին:) <<Տավուշշին>> ԲԲԸ-ի կողմից <<իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը>> ներկայացվել է միային 39.119% բաժնեմաս ունեցող իրական շահառուի մասին և ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացվել է 90 494.6 հազ. ՀՀ դրամ արժեքով, որը չի համապատասխանում ներկայացված գնային առաջարկին:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/4-Ա ծածկագրով հրավերի 8.10 կետը <<Տավուշշին>> ԲԲԸ-ի կողմից Չափաբաժին 1-ի համար ներկայացված հայտը մերժել:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/4-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը հանձնաժողովը հրավերի մասնակից ընկերություններին, բացի <<Տավուշշին>> ԲԲԸ-ից հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 14.02.2022 թվականին ժամը 11:30-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Նախագահ		Ս. Ասրյան
անդամներ		Ա. Սիմոնյան
		Ն. Ավետյան
		Ն. Մանուկյան
Քարտուղար		Ա. Սարգսյան